№ 7368
619
4-21
30 JUL 2010
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Российской Акад
СССР

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Անասունների զանազան հիվանդությունները կանխելու և դադարեցնելու համար ձեռք առնելիք միջոցների կիրառմանը գյուղական լայն խավերին մասնակից անելու նպատակով, գավառային և շրջանային գործկոմների հատուկ վորոշումների համաձայն, կազմակերպվում են անասնաբուժա-սանիտարական հոգաբարձություններ։

2. Անասնաբուժա-սանիտարական հոգաբարձությունները բոլոր գյուղերում ընտրվում են հասարակական ընդհանուր ժողովում այն հաշվով, վոր միջին թվով 30 տնտեսության ընկնի մեկ հոգաբարձու։

ԾԱՆՈԹՈՒԹ.— Անասնաբուժա-սանիտարական հոգաբարձությունների թիվը, նայած տեղական պայմաններին, սահմանվում են շրջգործկոմի կողմից։

3. Անասնաբուժա-սանիտարական հոգաբարձուներ կարող են ընտրվել չափահաս և ընտրական իրավունքից չզրկված քաղաքացիներ։

4. Անասնաբուժա-սանիտարական հոգաբարձուները և նրանց թեկնածուներն ընտրվում են մեկ տարի ժամանակով։ Կայացրած ընտրությունների մասին

8506
17 MAY 2013
U
Ca2482

կազմվում է արձանագրություն և ուղարկվում շրջգործկոմին ու շրջանային անասնաբուժին։

5. Անասնաբուժա-սանիտարական հոգաբարձուներն իրենց աշխատանքները տանում են շրջանային անասնաբուժի ցուցմունքներով և գյուղխորհրդի, գյուղի հասարակական կազմակերպությունների ու գյուղացիական մասսաների միջոցով։

6. Գավգործոմների վորոշմամբ անասնաբուժա-սանիտարական հոգաբարձուները կարող են ոգտվել զանազան արտոնություններից, ինչպես՝ ցեղական արտադրողներից ոգտվելու, հերթից դուրս ձրի անասնաբուժական և այլ ոգնություն ստանալու գործում։

7. Շրջանի անասնաբուժա-սանիտարական հոգաբարձուների աշխատանքները համաձայնեցնելու նպատակով, շրջգործկոմներին կից հրավիրվում են պարբերական ընդհանուր ժողովներ, շրջանային անասնաբուժի նախագահությամբ։

ԾԱՆՈԹՈՒԹ.—Հոգաբարձուների ընդհանուր ժողովը հրավիրվում է շրջգործկոմի կողմից ըստ հարկի շրջանասնաբուժի առաջադրությամբ, բայց տարեկան 4 անգամից վոչ պակաս։ Ընդհանուր ժողովը կարող է հրավիրվել նաև 20-ից վոչ պակաս անասնաբուժա-սանիտարական հոգաբարձուների պահանջմամբ։

8. Անասնաբուժա-սանիտարական հոգաբարձուների ընդհանուր ժողովն ընտրում է իր կողմից շրջգործկոմին կից գործող, 5 հոգուց բաղկացած, Վեր-

61/30-67

յուն խորհուրդ, վորին և պատկանում է անասնաբուժա-սանիտարական հոգաբարձուների աշխատանքների ղեկավարությունը։

ԾԱՆՈԹՈՒԹ.—Բացի ընդհանուր ժողովի կողմից ընտրվածներից, խորհրդի անդամներ են համարվում շրջգործկոմի կողմից նշանակված անդամը և շրջանային անասնաբուժը։

9. Անասնաբուժա-սանիտարական հոգաբարձուների խորհուրդն ունի իր կնիքն ու գրոշմը, վորպիսիք պահվում են նախագահի մոտ։

10. Անասնաբուժա-սանիտարական հոգաբարձուների շրջանային խորհուրդն աշխատում է շրջգործկոմի, իսկ գյուղերի հոգաբարձուները՝ Գյուղխորհրդների Գյուղատնտեսական Սեկցիաներին կից։

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱ - ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Անասնաբուժա-սանիտարական հոգաբարձուները կատարում են հետևյալ պարտականությունները.

ա) Հետևում են իրենց սպասարկության ռայոնում գեղած տնտեսության անասունների առողջական վիճակին, աջակցում են անասնաբուժական կանոնադրության և ի զարգացումն նրա, կենտրոնական ու տեղական իշխանությունների հրատարակած հրահանգների ու պարտադիր վորոշումների, ինչպես նաև նախազգուշական ու անասունների զանազան վարակիչ հիվանդու-

թյունների դեմ կռվելու համար արած կարգադրությունների կիրառմանը։

բ) Աջակցում են համապատասխան կազմակերպությունների միջոցով անասունների գերեզմանոցի համար հատուկ հողամաս հատկացնելուն, հետևում են նրա կարգին պահելուն (խանդակներ շինել, ցանկապատել և այլն) և դիակների կանոնավոր հավաքմանը։

ԾԱՆՈԹՈՒԹ. Անասունների գերեզմանոցի տեղը վորոշվում է անասնաբուժի ցուցմունքներով։

գ) Ամեն տարվա գարնանը անասուններն արոտատեղերը քշելուց առաջ քննության են յենթարկում անասունների գերեզմանոցը, հետևում են նրա շուրջը յեղած խանդակների ու ցանկապատի ամբողջությանը, նատած գերեզմանների կանոնավորությանը, արոտատեղերի դիակներից ու վոսկորներից մաքրելուն և հարկավոր ձևով թաղելուն։

դ) Հոգ են տանում, վոր գյուղն ունենա հատկապես դիակները կրելու համար սարքավորված սայլակ։

յե) Անասնաբուժի ցուցմունքներով քննության են յենթարկում արոտատեղերն ու ջրելատեղերը, թույլ չտալով անասուններին արածացնել և ջրել այնպիսի տեղերում, վորոնք կարող են վարակիչ հիվանդությունների աղբյուր դառնալ։

ՊԵՏ. ԿՈՄ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUA-Арм ССР

զ) Հետևում են ջրի ակունքներին, պաշտպանելով այդպիսիները փչանալուց ու կեղտոտությունից։

ե) Սանիտարական հանձնաժողովների հետ միասին հոգ են տանում զանազան աղտոտություններն ու աղբը թափելու համար տեղական իշխանությունների կողմից առանձին տեղ հատկացնելուն, թույլ չտալով, վոր կեղտոտությունները թափվեն գետակների, լճակների, արոտների և այն տեղերի մոտ, վորտեղից օգտվում են անասունները։

ը) Արոտատեղերը քշելուց առաջ անասնաբուժի ցուցմունքներով նախնական քննության են յենթարկում անասուններին։

ԾԱՆՈԹՈՒԹ.—Հոտի մեջ հայտնաբերված հիվանդ անասուններին արգելվում է առանց անասնաբուժի թույլտվության գնալ ընդհանուր արոտատեղերը։

թ) Հետևում են, վոր անասնաբուժական վկայական չունեցող բոլոր նոր գնված և տնտեսություն բերված անասունները յերկու շաբաթվա ընթացքում չմտնեն ընդհանուր հոտ ու չգնան ընդհանուր ջրելատեղը։

ժ) Տեղական իշխանությունների (գյուղխորհրդի, միլիցիայի) միջոցով, կամ անմիջականորեն հայտնում են անասնաբուժին վարակիչ հիվանդություններին հատուկ կասկածավոր միատեսակ նշաններով յերևան բերված և անհայտ պատ-

ճառներից անսպասելիորեն սատկած անասունների մասին։

ի) Հոգ են տանում, որ հիվանդ անասունները, մինչև անասնաբուժի գալն ու հիվանդության պարզելը առանձնացվեն և չթողնվեն ընդհանուր հոտը։

լ) Մտնում են վարակիչ հիվանդությամբ վարակված կետում գործող անասնաբուժա-սանիտարական հանձնաժողովի կազմի մեջ, մասնակցելով այն աշխատանքներին, որոնք նախատեսված են անասնաբուժա-սանիտարական հանձնաժողովների հրահանգներով։

խ) Հետևում են, որ արդյունաբերական նպատակներով անասուններ մորթելու կանոնները պահպանվեն քաղաքացիների կողմից և ոժանդակում են գյուղական սպանդանոցների կազմակերպման ու կանոնավոր պահպանման գործին։

ծ) Սանիտարական հանձնաժողովի հետ, անասնաբուժի ցուցմունքներով, հետևում են իրենց շրջանում լեզած հում նյութերի ձեռնարկություններին, հսկում են, որ տոնավաճառանոցներում և շուկաներում անասուններին հատկացրված հրապարակները կանոնավոր պահվեն և ժամանակին մաքրվեն։

կ) Մասնակցում են աղգաբնակության տրվելիք անասնաբուժական ոգնության գործի բարեկարգմանն ու «հեքիմության» և «բայթարության» դեմ տարվելիք պայքարին։

12. Սույն հրահանգներով նախատեսված բոլոր պարտականություններն անասնաբուժա-սանիտարական հոգաբարձուները կատարում են աղգաբնակության անմիջական մասնակցությամբ, որոնց հոգաբարձուն բացատրում և ձեռք առնելիք միջոցների կարևորությունը։

Գյուղացիների մեջ անասնաբուժական կրթությանը նպաստելու համար հոգաբարձուն տարածում է հանրամատչելի գրքույկներ, պլակատներ, թերթիկներ, մասմակցում է խրճիթ-ընթերցարաններում անասնաբուժական անկյուններ, դասախոսություններ, զրույցներ, ցուցադրական դասեր, ցուցահանդեսներ և այլն կազմակերպելուն։

13. Տեղական իշխանությունները պարտավոր են անասնաբուժա - սանիտարական հոգաբարձուներին ցույց տալ ամեն տեսակի աջակցություն նրանց վրա դրած պարտականություններն անթերի կատարելու համար։

14. Քաղաքացիների կողմից անասնաբուժա-սանիտարական հոգաբարձվի որինական պահանջները չկատարելու դեպքում, վերջինս նրանց դեմ ինքնագլուխ կերպով միջոցներ ձեռք չի առնում, այլ այդ մասին հայտնում է յուրաքանչյուր գյուղխորհրդին, որը, համաձայն գոյություն ունեցող կանոնների, միջոցներ ե ձեռք առնում որենքը խախտող քաղաքացիների դեմ։

8506

15. Անասնաբուժա-սանիտարական հոգաբարձուներն իրենց կատարած աշխատանքների մասին ներկայացնում են անասնաբուժին հաշվետու զեկուցումներ, ըստ անասնաբուժա-սանիտարական հոգաբարձուների խորհրդի մշակած ձևի ու վորոշման ժամկետի։

Ի. տ. Հողժողկոմի՝ Միրզախանյան

Ներքգործժողկոմ՝ Դ. Հովսեփյան

Անասնաբուժական վարչության պետ՝ Թորոսյան

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ИСТОРИИ Академии Наук

ՊԵՏԿԱՆ ԳՐ. ԴԱՐՊԱՍ
Гос. Библиотека
ZUUՈ-Արմ ССР
Ա. ԱՄ. Ա. ՄԱՏՈՒՈՒՅՈՒՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

<< Ազգային գրադարան
NL0289195

619
4-21

Հայպետ. առաջ. տպ. Գրատ. 326 բ. Պատ. 9545 — 500